ՀԱՆԴԷՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐԷՎԻ

ԳԱՀԵՐԷՑ ԳԱՂՂԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԳԵՏՈՒԹԵԱՆ

Գաղղիոյ քաղաքական աշխարհքը երկու կրէվի ունի, Ալբերդ և Յուլիոս, երկուքն ևս երեսփոխան, երկուքն ևս փաստաբան, երկուքն ևս կամպէդդայլ կուսակիցներ։ Երէցն Յուլիոսն է, ծնեալ 'ի 15 Օգոստոսի 1813ին, 68 տարեկան, տասն տարի աւելի մեծ քան զՎԼբերդ։

Լուի-Ֆիլիպի առաջին ժամանակներէն 'ի վեր ռամկապետական էր. 1837ին Բարպէի դաւակիցներէն զերկուսն պաշտպանեց, 1848ին առժամանակեայ վարչութեան հետ հրամանակատար եղաւ 'ի Ժիւռա իր հայրենիքն։ Երեսփոխան ընտրուեցաւ 48ին և Հռոմմոյ արշաւանին դէմ քուէարկեց։ Առակ եղաւ պատմութեան մէջ իր առաջարկն՝ Ռամկապետութեան գլուխ չընտրել, այլ պարզ Խորհրդարանին նախագահ մը, և զայս ոչ ժո-

digitised by A.R.A.R.@

զոլուրդն, այլ համախմբութիւնն պիտի ընտրէր, և այն իշխանութեամբ որ միշտ կարենայ իշխանութիւնը վերցնել իր վրայէն։ Դեկտեմբերի 2ին Տէրութեան հարուածին դէմ բողոքեց, կանաւորեցաւ և 'ի Մագանս զրկուեցաւ։ Ա.յսպէս Ռամկապետական նահատակաց կարգին մէջ անցաւ, թէպէտ քիչ ամիս յետոյ յաջողութիւն ելաւ և խաղաղութեամբ իր փաստաբանութեան արուեստին զբաղեցաւ։

Երբ Նաբոլէոնական աստղն 'ի մայրն խոնարհիլ սկսաւ, 1868ին դարձեալ երեսփոխան ընտրուեցաւ Ժիւռայի սահմանին մէջ։ միշտ Զախակողմեան եղաւ, և հակառաւութեանց մէջ փոքրիկ մասն ունեցաւ։

Հազիւ Նաբոլէոն ինկաւ, կրէվի բարձրացաւ։ Օգնեց Ֆաւրի առաջարկին հրատարակելու Նաբոլէոնական հարստութեան անկումն. և առժամանակեայ վարչութեանն հնարողներէն մէկն եղաւ. սահմանադիր ժողովոյն կոչումն ուզեց. որով 1871ին երեք տեղոյ ընտրութեանն արժանացաւ, Բարիզու, Հռոդանոսի Բերանոց, և իր հին Դպրոցին, և Գորտոյի ժողովարանը զինքը նախագահ ընտրեց։ Իր նախագահութեան կենաց մէջ գեղեցիկ էջ մ'ունի։ Երբ 1873ին ապրիլի նստի մը մէջ, ժողովարանը խռովութիւն մ'ելաւ ճարտասանի մը դէմ զոր ինքը չկրցաւ լռեցընել, կրէվի թողուց իր բարձր պաշտօնն և հրաժարեցաւ, և կրկին ընտրուելով յանձն չառաւ։

Խորհրդարանին նախագահութենէն անցաւ Տէրութեան նախագահ ըլլալու. արդէն որոշեալ Դիւէրի մահուընէն ետև կուսակցութեան գլուխ ըլլալ, ինքը եղաւ երևելի գլուխն։ Ընտրուելով առժամանակեայ հրամայելու Գաղղիոյ, ըստ օրինաց սահմանագրութեան, պիտի թագաւորէ և ոչ կառավարէ։

Արդէն ամենուն բերանը կը յաձի կենսագրութիւնն զոր ըրաւ Լորիէ իր ալակիցն՝ Գորտոյի ժողովարանին — և է այս. «Դատաստանարանին վրայ ա.հաւոր հակառակորդ մ'է, ճիշդ, սեղմ, անճոռոմ, և յերկար պարբերութեանց կը խորշի։ Կարգէ դուրս պարզութեամբ կը պատգամէ, առանց պերճասիրութեան, գրեթէ առանց աղաղակի, այն մարդուն նման որ պատճառաբանութեանց դէմ կը կռուի, և զայն ամենայն զանց կ'ընէ։ Ցստակ ձայնով կը խօսի, մաքուր, սակաւ մի մեղմ՝ եզական հակադրութիւն իր արտաքինական կորովին, սակայն այս կերպին մէջն ևս առաջին կարգի ճառախօսութիւն ունի։... Ուշ ունի համոզելու միայն... և իր խօսքն մասնաւոր համ մ'ունի, որ զինքը փոկիոնի ու Ֆրանքլինի նմանութեան կը մատեցնէ։

Ճշմարիտն այս է, որ կրէվի չափաւոր անձ մ'է և ոչ աւելի։ Ոչ Դիւէրի հանճարն ունի և ոչ Մագ–Մահոնի հեղինակութիւնն։ Գործունեայ է, զուարթակենցաղ։ Եթէ պատմուեան կրէր, կ'ըսէ Պ. Կրիմ, կատոն պիտի կարծէիր. իր վրազեստոին տեսնելով այն տանտիրոջ պիտի նմանցընէիր որ իր խռովարար վարձաւորներէն վարձքի դրամն չէ կրցած առնել։ Ծանր կերպեր ունի. և այս՝ ինչպէս միշտ կը հանդիպի, ձեռընտու կ'ըլլայ համբաւելու զինքն իբրև հաստատուն բարք ունեցող, բոլորն միակտուր։ Խորհրդարանին մէջ չորս ժամ առանց փոքրիկ շարժումն ընելու կը նստէր։ Ճիշդ 2¾ կը սկսէր նիստն, միայն մէկ անդամ մը քառորդ մ'ուշացաւ, վասն զի կոճակներէն մէկն չէր դրած, և իրեն գէշ կ'երևար նախագահ նստիլ առանց վերէն 'ի վայր կոճկեալ ըլլալու։

Իրեն համար կարելի չէ ըսել ինչպէս ըսաւ, Ժիւլ Ֆէրրի համար, Մատիէ տը Մոնժոյ երեսփոխանն առ Ժիւլ Ֆաւր. Անհաւասիկ ձեզի կատարեալ մարդն. ուշ դրէք թէ ինչպէս ձարտարութեամբ երկու չրոց մէջ կը լողայ։ կրէվի միշտ նոյն չրոյ մէջ լողաց. այսօր նոյն ռամկապետականն է՝ ինչ որ էր Լուի Ֆիլիպի ատենն։

———

digitised by A.R.A.R.@